

Եւ խաղաղութեան Աստուածը
թող լինի ձեզ հետ...

Պողոս Առաքեալ

Հիւնգնաբեր, 14 ՀՈՒՆԻՍԻ 2018Թ.
№ 15 (473)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Կարեն Համբարձումյան. «Շնորհակալությունն ջերմ ընդունելության եւ բարեմաղթանքների համար, լծվենք աշխատանքի՝ ի շահ Սյունյաց աշխարհի»

2018թ. հունիսի 8-ը պատմական օր է Սյունիքում:

Մարզպետի պաշտոնից վերջապես հեռացվել է չարավառ Վահե Հակոբյանը:

Դա սոսկ պաշտոնափոխություն չէ, մարզպետափոխություն չէ, այլ Սյունիքում մեկուկես տարի տեւած ազգային-ազատագրական պայքարի հաղթական ավարտ, ինչի կապակցությամբ շնորհավորում ենք արժանապատիվ

բոլոր սյունեցիներին:

Սյունիքի մարզպետ է նշանակվել մեր արժանավոր հայրենակից Կարեն Համբարձումյանը:

Կարեն Համբարձումյանը ծնվել է 1982թ. մայիսի 16-ին Սիսիան քաղաքում: 1989-1998թթ. սովորել է Սիսիանի N1 միջնակարգ դպրոցում, իսկ 1998-2000թթ.՝ Սիսիանի վարժարանում: 2000-2004թթ. ուսանել է Երեւանի

պետական ճարտարագիտական համալսարանի «Չեղճարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում (էներգետիկայի ճյուղ)» ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի որակավորում: 2004-2006թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2006-2008թթ. շարունակել է կրթությունը ԵՊՃՀ-ի մագիստրատուրայում եւ ստացել էներգետիկ տնտեսագետի որակավորում, էջ 2

Հստակեցվել է «Սյունյաց Երկիր» 15-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների ծրագիրը

«Սյունյաց Երկիր» խմբագրական խորհրդում քննարկվել է թերթի ծննդյան 15-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը:

«Սյունյաց Երկիրը» 15 տարեկան է դառնում 2018թ. հոկտեմբերի 1-ին:

Այդ կապակցությամբ կթողարկվի թերթի հատուկ համար:

Խմբագրություն կայցելեն գիտության, մշակույթի, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ՝ մայրաքաղաքից, կիրավիրվեն պետական ու հանրային գործիչներ, ովքեր կանգնած են պարբերականի հիմնադրման ակունքներում, որոնց մասնակցությամբ կանցկացվի «Կլոր սեղան» թերթի անցած ճանապարհի քննարկման նպատակով:

Տեղի կունենա նաեւ թերթի բոլոր տարիների բարեկամների ընդունելություն խմբագրությունում:

Նախատեսվում են այլ միջոցառումներ եւս: Միջոցառումների շարքը կեզրավակվի թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի երեւանյան առուլիսով՝ նվիրված «Սյունյաց Երկիր» 15-ամյա ճանապարհին:

Հոբելյանի նախապատրաստմանը զուգահեռ աշխատանքներ կտարվեն syuniacyerkir.am կայքը արդիականացնելու ուղղությամբ:

Հոբելյանի նախօրեին լույս կտեսնի լրագրի բացառիկ համարը՝ նվիրված բոլոր ժամանակների ամենամեծ սյունեցիներից մեկին՝ Սուրբ Հովհան Որոտնեցուն:

«Սյունյաց Երկիր»



ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանել է «Սյունյաց Երկիր» հարցմանը

syuniacyerkir.am կայքում ս.թ. մայիսի 22-ին հրապարակվել է թերթի խմբագրի նամակը՝ ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին:

Նամակը հրապարակվել է նաեւ «Սյունյաց Երկիր» թերթի տպագիր օրինակում (31 մայիսի 2018թ.):

Խոսքն այն մասին էր, որ մարզպետը պետական սեփականություն հանդիսացող հիմնադրամից պարտքով 300 մլն դրամ է հատկացրել իր ղեկավարած մյուս՝ մասնավոր հիմնադրամին. այդ գումարը վերադարձվել է Սյունիքի զարգացման եւ ներդրման հիմնադրամին:

Մեր նամակին պատասխանել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Էդգար Գեւորգյանը:

Պատասխանի ամենաուշագրավ բացահայտումներից մեկն այն է, որ Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամը 2016-18թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից միջոցներ չի ստացել: Այդ դեպքում նոր հարց է ծագում՝ իսկ որտեղից է 2016թ. դեկտեմբերին գումարներ ստացել Սյունիքի զարգացման եւ ներդրման հիմնադրամը:

Էդգար Գեւորգյանի պատասխանը՝ ստորեւ: «Սյունյաց Երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին

Հարգելի պարոն Ալեքսանյան
Չեր կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հասցեագրված 22.05.2018թ. գրության առնչությամբ հայտնում ենք հետեւյալը:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 37-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով հիմնադրամը վարում է հաշվապահական հաշվառում եւ ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադրամի կողմից Օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաեւ այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին եւ ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

Օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ հիմնադրամն <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության իրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել հաշվետվությունը իր գործունեության մասին: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի եւ դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն էջ 2

Կարեն Յամբարձումյան. «Շնորհակալությունն ջերմ ընդունելության եւ բարեմաղթանքների համար, լծվենք աշխատանքի՝ ի շահ Այունյաց աշխարհի»



էջ 1 ինչպես եւ մագիստրոսի կոչում: 2010թ. հիմնադրել է «Հովթեր» ՍՊԸ-ն, աշխատել որպես տնօրեն: 2014թ. օգոստոսից մինչեւ այսօր աշխատում է «Հայաստանի բարձրավիճակի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ որպես չորրորդ բաժնի պետ: Ամուսնացած է, ունի մեկ որդի, մեկ դուստր:

«Այունյաց երկիրը» շնորհավորում է Կարեն Յամբարձումյանին՝ նրան մաղթելով հայրենաշեն գործունեությունն եւ հաջողություններ՝ ի փառս Այունյաց աշխարհի:

պետարանի վարչությունների եւ բաժինների պատասխանատուները, զինվորական կառույցների եւ իրավապահ մարմինների ղեկավարները:

Նախարար Սուրեն Պապիկյանը նախեառաջ ներկայացրեց մեր երկրի առջեւ ծառայած մարտահրավերները՝ նաեւ նշելով, որ հետեղափոխական Հայաստանում հնարավորություն ենք ստացել կառուցել ժողովրդավարական պետություն: Իսկ քաղաքակրթական այդ հանգրվանին հասնելու համար պիտի սկսենք տեղական ինքնակառավարման մարմիններից: Ըստ այդմ՝ ընդգծեց նախարարը, կարեւորվում է համայնքային աշխատանքների թափանցիկությունը, մարդկանց հետ պարզ շփման գործելակերպը: Խոսքը վերաբերում է մարդկանց՝ համայնքային բյուջեին տեղյակ լինելուն, նաեւ համայնքներին տրվող լրավճարներին իրազեկ լինելուն: Անդրադառնալով առաջիկա ծրագրերին՝ Սուրեն Պապիկյանը նշեց, որ տարածքային կառավարման

եւ զարգացման նախարարությունը շուտով մարզպետարաններին եւ համայնքների ղեկավարներին կուղարկի մի աշխատակարգ, ըստ որի՝ անհրաժեշտ կլինի այսուհետ ձեւավորել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի եւ գույքի օտարման տարեկան պլան, ինչը լուծելու է մի քանի խնդիր: Արդյունքում՝ նախեառաջ հանրությունը քաջատեղյակ է լինելու, թե իր համայնքն իրականում ինչքան հողային ֆոնդ է գույք ունի՝ օտարման ենթակա, ինչի համար է օտարվում, ուր են գնալու օտարված գույքից ստացված գումարները եւ նման այլ հարցեր, որոնք նախկինում հասարակության համար եղել են անհասանելի:

Այնուհետեւ Սուրեն Պապիկյանը շնորհավորեց Կարեն Յամբարձումյանին, նրան բեղմնավոր աշխատանք մաղթեց, դահլիճում գտնվողներին՝ մարզպետի հետ սերտ համագործակցություն, Այունյաց աշխարհին՝ շենություն: Նորանշանակ մարզպետ Կարեն Յամբարձումյանը շնորհակալություն հայտնեց

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ Բարգավաճ Հայաստան կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանին՝ բարձր քաղաքական պաշտոնն իրեն վստահելու համար եւ հավաստիացրեց, որ հուսախաբ չի անի: Իսկ հաջողության հասնելու գրավականը համարում է բոլոր օղակների համակարգված եւ համատեղ աշխատանքը:

«Շնորհակալությունն ջերմ ընդունելության եւ բարեմաղթանքների համար, լծվենք աշխատանքի՝ ի շահ Այունյաց աշխարհի եւ ի փառս մեր հայրենիքի հզորացման», - իր խոսքն այսպես եզրափակեց Այունյեի նորանշանակ մարզպետ Կարեն Յամբարձումյանը:

Պաշտոնակալության արարողության տեսագրությունը կարող եք դիտել syuniacyerki.am կայքի ֆեյսբուքյան էջում:

«Այունյաց երկիր»

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանել է «Այունյաց երկրի» հարցմանը



Էդգար Գեղորյան

էջ 1 ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի եւ հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից եւ ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում:

Սահմանված ժամկետում հաշվետվությունը չհրապարակելու, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին այդ մասին չձեռնարկելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն կիրառում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախա-

տեսված պատասխանատվության միջոցներ:

Վերը հիշատակված իրավաճորդների վերլուծության համաձայն հիմնադրամը սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում եւ պարտավոր է յուրաքանչյուր տարի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ձեւով եւ կարգով հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, որը, ի թիվս այլ տեղեկատվության, ներառում է տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի եւ դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի վերաբերյալ: Հետեւաբար, հիմնադրամներին ֆինանսական հաշվետվություններ հրապարակելու պարտավորեցնելու գործառույթներ, լծակներ ՀՀ ֆինանսների նախարարությունը չունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Այունյեի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամին 2016-2018 թվականների ընթացքում ՀՀ պետական բյուջեից ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

Հարգանքով՝
Էդգար Գեղորյան
31 մայիսի 2018թ.

Մերուժան Սիմոնյանը հրաժարվում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամակցությունից



Ես՝ Մերուժան Սիմոնյան, հրաժարվում եմ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամակցությունից:

Իմ կողմից՝ Այունյեի մարզպետի պաշտոնը զբաղեցնելու մասին

մանուկում շրջանառված տեղեկությունների արդյունքում կարող է տպավորություն ստեղծվել, որ ես այս քայլն անում եմ այլ մարդկանց կողմից մարզպետ նշանակվելու պատճառով, բայց ո՛չ, ի գիտություն հայտնեմ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը երկար դադարից հետո իշխանության մաս է կազմում, իսկ ես այս լուսավոր օրը հրաժարվում եմ նաեւ ռեյտինգային կարգով ստացած պատգամավորի իմ պաշտոնից, որը, ի դեպ, առավել բարձր պաշտոն է, քան մարզպետինը:

Ինձ համար երբեք պաշտոն զբաղեցնելը ինքնանպատակ չի եղել, առաջնային են եղել իմ խիղճն ու սկզբունքները:

Այս պահին քաղաքականությամբ զբաղվելու ցանկություն չունեմ: Ուրուշունս կայացրել եմ Այունյեի իմ ընկերների եւ թիմակիցների հետ քննարկման արդյունքում:

Անկախ այս ամեն ինչից, շարունակելու եմ լինել հայ մարդու կողքին, այունեցու կողքին:

Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր տարիների ընթացքում անշահախնդիր եւ անդավաճան եղել եմ իմ կողքին:

Շնորհակալ եմ այունեցիներին: Շնորհակալ եմ թասիբով դափանցիներին:

slaq.am
08.06.2018

Ստորագրվեց Արաքս գետի վրա ՀԷԿ-ի կառուցման համար Իրանի ու Հայաստանի համաձայնագրի մասին օրենքը

«Փարս Թու դեյ» -ԻԻՆԱ-ի հաղորդման համաձայն, ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին ստորագրեց եւ գործադրման համար Իրանի էներգետիկայի նախարարության փոխանցեց Արաքս գետի վրա ՀԷԿ-ի կառուցման համար ԻԻՀ-ի ու ՀՀ-ի միջեւ ստորագրված համաձայնագրի մասին օրենքը:

Հիշեցնենք, որ Արաքս գետի վրա ՀԷԿ-ի կառուցման համար Իրանի ու Հայաստանի համաձայնագրի մասին օրենքն անցած ապրիլի 18-ին վավերացվեց Իրանի իսլամական խորհրդարանի կողմից:

Այս օրինագծում ընդգծված է. «Վավերացվում է Արաքս գետի վրա հոսանքային ՀԷԿ-երի կառուցման ու շահագործման կապակցությամբ ԻԻՀ-ի ու ՀՀ-ի կառավարությունների միջեւ ստորագրված համագործակցության համաձայնագիրը եւ թույլատրվում է իրականացնել այդ կապակցությամբ փաստաթղթերի փոխանակումը»:

hetq.am
20 մայիսի 2018թ.

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳԻ ԲՆԱԳԻՐԸ ՆՈՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ



Հարգարժան պարոնայք Արմեն Սարգսյան և Նիկոլ Փաշինյան, նախ շնորհավորում են հայ ժողովրդին ձեր նախագահի ու վարչապետի գաղափարային կապակցությամբ և մեր ժողովրդի սպասումներն իրականություն դարձնելու ճանապարհին մաղթում ձեզ ամուր առողջություն:

Հարցը, որով դիմում են ձեզ՝ մեր պետական օրհներգին վերաբերող առաջարկություն է:

Հայտնությունն արած չեմ լինի, եթե ասեմ, որ գործող պետական օրհներգի տեքստը, մեր գրական լեզվի կայացման առաջին փուլի խրթին հայերենով շարադրված, հայ ժողովրդին՝ իր պետականությամբ ոգեշնչելու ընդամենը տարտան ճիգեր պարունակող, մի ժամանակավրեպ եղերերգ է, որին տասնամյակներ ի վեր մեր ժողովուրդը «հարկադրված» պետական օրհներգ է անվանում: Միայն մեր պետության ու պետականության հանդեպ ունեցած ակնածանքն է պատճառը, որ ավելի խիստ որակումներից ինձ զերծ են պահում:

Գործող օրհներգը նորով փոխարինելու խնդիրը տարիներ առաջ Հայաստանի Հանրապետության կառավարության օրակարգում եղել է: Այդ հարցը կարգավորելու մտահոգությամբ իշխանությունները նույնիսկ մրցույթ էին հայտարարել, սակայն օրհներգի համար ներկայացված ոչ մի չափածո ստեղծագործություն «հաղթող» չի ճանաչվել:

Ասեմ, որ այդ մրցույթին ես մասնակցություն չեմ ունեցել, որեւէ բան գրելու փորձ անգամ չեմ արել: Օրհներգի տեքստ գրելը համարելով բացառիկ եւ բավականաչափ հանդուգն հանձնառություն, որովհետեւ նման պատասխանատվություն ստանձնելով՝ պիտի կարողանաս տարատեսակ խառնվածքներ ու նախասիրություններ ունեցող միլիոնավոր մարդկանց հարազատացնող, նրանց հոգիներում նվիրական զգացմունքներ արթնացնող խոսք հնչեցնել...

Բայց տարիներ անց՝ Մեծ եղեռնի հարյուրերորդ տարելիցին, բերթերից մեկում հան-

դիպելով մեր պետական օրհներգի բնագրին ու վերստին գայրացնող զգացողություններով պարուրվելով՝ օրհներգի նոր տեքստ գրելու խնդիր դրեցի իմ առջեւ: Եվ համարելով, որ Բարսեղ Կանաչյանի գրած ազգային օրհներգի երաժշտությունը, որպես հայոց պետականության խորհրդանիշ, վաղուց է հայ ժողովրդին հարազատացել՝ փորձեցի նույն երաժշտական չափի մեջ պետական օրհներգի կոչման հավակնող խոսք գրել:

Ու ինձ հաջողվեց, տողերի որոշակի սահմանափակ ծավալ ենթադրող, օրհներգին բնորոշ սեղմության մեջ՝ ընդգրկում եւ ավարտուն ասելիքով բանաստեղծական խոսք շարադրել: «Օրհներգ» վերնագրված այդ ստեղծագործությունն ընդգրկված է 2015թ. հրատարակված իմ «Ամսահոլության համանվագ» ժողովածուի մեջ:

Իմ կողմից օրհներգի նոր բնագրի համար առաջարկվող այդ բանաստեղծական խոսքը ձեր ուշադրությանն են ներկայացնում հույս ունենալով, որ այն կարժանանա ինչպես ձեր, այնպես էլ մեր ժողովրդի հավանությանը:



ՕՐՀՆԵՐԳ

**Դարե՛ր անպարտ, մեր հայրենի՛ք,
Դու՛ ավետյաց մեր ոստան...
Դու մեր հոգու սիրո հա՛մն ես,
Մեր սուրբ Մայրն ես, Հայաստա՛ն...**

**Փողփողացող քո դրոշը...
Մեր սրտերու՛ն կրեցինք.
Բազո՛ւմ դարեր մեր ողջ ազգի
երազներով օծեցինք...**

**Եռագույնը՝ հրաշագեղ,
Խորհու՛րդն է մեր ինքնության...
Թող մի՛շտ ցույց քո դրոշը,
Մեր պանծալի Հայաստա՛ն...**

Ինձ թվում է՝ այս հակիրճ բանաստեղծական խոսքում ապրված եւ ամփոփ կերպով ներկայացված են մեր ազգային դարավոր լինելիությունն ամրագրող այն հիմնական գաղափարական ուղերձները, որոնք, ըստ իս,

պիտի որ հայ ժողովրդի պետական օրհներգի բնագրում ներկայացված լինեին:

Հայաստանի պետական օրհներգում, իմ կարծիքով, պիտի արձանագրված լինի աշխարհի ժողովուրդների երթին հազարամյակների խորքերից եկող մեր մշտառկա ներկայությունը:

**Դարե՛ր անպարտ, մեր հայրենի՛ք,
Դու՛ ավետյաց մեր ոստան...**

Մեր ժողովրդի օրհներգում, երեւի թե, պիտի նաեւ ակնարկ լինի այն մասին, թե ինչպիսի սրբազան խորհուրդ է իր մեջ կրում մեզ համար հայրենիք հասկացությունը:

**Դու մեր հոգու սիրո հա՛մն ես,
Մեր սուրբ Մայրն ես, Հայաստա՛ն...**

Հայոց օրհներգի մեջ, անտարակույս, նաեւ պիտի ներկայացված լինի այն իրողությունը, թե քանի՞-քանի սերունդների երազներով գուրգուրված դարերի ճանապարհ անցնելուց

Թող ամենեւին չստեղծվի այն տպավորությունը, թե նշված նկատառումները համառոտագրել են ու հետո դրանցով առաջնորդվելով շարադրել օրհներգի բնագիրը: Իրականում այն երկնվել է, իսկ հիշյալ փաստարկները ենթագիտակցականի խորքերից ստեղծագործությունն արարելու պահին պարզապես ինձ ուղեկցել են:

Իմ կողմից առաջարկվող օրհներգի տարբերակում որոշակիորեն կարեւորում են նաեւ այն իրողությունը, որ մեր ազգային ինքնության ու պետականության արժեւորմանը միտված, ոգեղեն հուզականությամբ շարադրված վերոնշյալ ուղերձները նոր բնագրի մեջ հնչում են բոլորի համար պարզ ու ընկալելի հայերենով:

Գուցե ոմանք առաջին տողում հնչող «Դարե՛ր անպարտ, մեր հայրենի՛ք» հայտարարությունը փորձեն վիճարկել՝ վկայակոչելով մեր հայրենիքի դարերով նվաճված լինելու հանգամանքը: Հնչած հայտարարության ճշմարտագիտությունը նման փաստարկով կասկածի տակ առնելու ցանկություն ունեցող մարդկանց ընդամենը հետեւյալը կասեմ. եթե պետականությունից զրկված մեր ժողովրդի բիբլիական, անպարտելի ոգին մեր տարաբախտ գոյության բազմադարյա անլուր ոգորումներում մեզ մշտապես ուղեկցած չլինեք, ապա մենք այսօր պետություն չէինք ունենա: Հենց այդ անպարտելի ոգուց է վերակերտվել այսօրվա Հայաստանի Հանրապետությունը...

Մեծարժո պարոնայք, երեւի հասկանալի է, թե ինչու՞ են այս հարցով ձեզ դիմում: Եվ, այնուամենայնիվ, իմ այս քայլի խորքային պատճառը պարտավոր են բարձրաձայնել. դա այն է, որ թերահավատորեն են վերաբերվում հայաստանյան իրականության մեջ անցկացվող մրցույթների անկաշառությանը: Իսկ եթե այդ մրցույթներում անգամ չլինի դրամական մրցանակներ են նախատեսված լինում, ապա դրանցում գրանցված արդյունքների արդարագիտությանը, կարելի է ասել, բացարձակապես չեն հավատում:

Եթե բան է՝ իմ ցանկությունն իրականություն դառնա ու այս բանաստեղծական խոսքը ծառայի այն առաքելությանը, որի համար արարվել է, եւ Հայաստանի կառավարությունը դրամական ինչ-որ պարգեւավճարով փորձի երախտագիտություն հայտնել հեղինակին, ապա նախապես ասեմ, որ այդ մրցանակը թող փոխանցվի հայոց բանակին, որովհետեւ այս ստեղծագործությունը, անկախ նրա հետագա ճակատագիրից, եւ վաղուց նվիրել են Հայաստանի Հանրապետությանը...

Խնդրում են ինչ-որ ձեւով ինձ տեղյակ պահեք, թե ի՞նչ ընթացք է տվել կամ տալու իմ առաջարկությանը (հեռախոսներ՝ 099922122, 094447793, էլ. փոստ՝ tigrigor55@mail.ru):

**Սիրով եւ հարգանքով՝
Տիգրան Գրիգորյան**

Ողջամի՛տ է արդյոք Դավիթ բեկի հուշարձանին կից ինչ-որ բանկի շենք կառուցելը

Հունիսի 5-ին Կապանի համայնքապետարանում տեղի է ունեցել հանրային քննարկում Դավիթ բեկի հուշարձանի անմիջական մերձակայքում կառուցվող բանկային շենքի նպատակահարմարության շուրջ: Կապանցիների համար նվիրական այդ վայրում շենք կառուցելու նպատակահարմարությունը, կարծում ենք, կգրավի նաեւ Սյունիքի նոր մարզպետի ուշադրությունը:

Լուսանկարները՝ Ռուբեն Հարությունյանի



«Այունյաց երկիր»

Է՛յ, Սուլեյման-յան՝ քեզ հանդիպած սյունեցիները ցած էին նայում, որ չտեսնեն թշվառիդ ողորկ գլուխը

Ինչ-որ մի թերթ հրապարակել է ինչ-որ Արման Սուլեյմանյանի «Թամբալուքյան մեխանիկա» հոդվածը: Ըստ հեղինակի՝ թամբալուքյանը Սյունիքի մարզի գաղափարական հիմքն է: Հեղինակը փորձել է բնութագրել կապանցուն, բայց գլխապատույտ է ունեցել եւ մոլորության մեջ ընկել: Հոդվածին արձագանքել է Արսեն Գրիգորյանը. արձագանքը՝ ստորեւ:

Ես սյունեցի եմ, եթե դու կարծում ես, թե կյանքն ինչ-ինչ հարցերում անարդար է վարվել սյունեցիներին նկատմամբ (աշխատավարձը ցածր է, սոցիալապես անապահով ենք, հարեւանի կինն ավելի գեղեցիկ է), ուրեմն որոշ բաներ ճիշտ են նկատել, բայց քո վերլուծությունը բոլոր սյունեցիների մեջ առաջացրել է խորը զայրույթ, զարմանք, ավելի ճիշտ՝ զգվածք, իսկ քո անձի նկատմամբ՝ հակակրանք: Եթե իսկապես դա էր հոդվածիդ նպատակը, ապա պետք է ասել՝ մեկ վայրկյանում դրանով արժանացել ես համայն Սյունիքի, առավել եւս՝ Կապանի բնակչության համատարած ատելությանն ու արհամարհանքին: Գուցե հենց դա է պատճառը, որ որեւէ մեկը քո խեղճատակություն-հոդվածի համար օձիքից չի բռնել ու սյունեցու, կապանցու անունից պատիվ պահանջել մտածելով նաեւ, որ գուցե մարդն այս (դու), այնուամենայնիվ, կզղջա իր տգետ քայլի համար, բայց՝ ի հեճուկս քո նկատմամբ մեղմ վարվողների, այդ կարծիքին չեմ իմքս: Նաեւ ասեմ՝ չես իջել Լոռվա սարերից, գլորվել ես, ուստի եւ չես կարող սարահանքի ենթարկել մի ողջ ժողովրդի (դու անհատի մասին չես գրել), առաջինը նրա համար, որ այս հարթությունում դու կհանդիպես կապանցի մտավորականին, որը 1-2 վայրկյանում քո խեղճությունից մտքերին ու հեզմական ձեւակերպումներին այնպիսի ուժգին ապտակ կհասցնի, որ մեկընդմիջտ կհրաժարվես վերամբարձ ոճով խոսելու վարժանքներից: Անտեղյակիդ հայտնեմ, որ Կապանը Հայաստանի հարավային մարտաքաղաքն է, եւ դա իմ ձեւակերպումը չէ. քո նշած Սովետմիության տարիներին եղել է խոշոր արդյունաբերական կենտրոն, երկաթուղային հանգույց... Մի թե կապանցին է մեղավոր, որ նախկին գործող հեղինակավոր եւ ճանաչված 15 արտադրական հզորությունները կաթվածահար լինելով մայր են մտել: Սա պետք է հասու լիներ սուլեյման-յանիդ ուղեղին՝ գրիչ վերցնելուց եւ Կապանի մասին խոսելուց առաջ:

Դու գրապատողի լեզվով ու արհամարհանքով գրել ես մոռնեցիս մերձիկ մասին՝ անտեսելով նրանց հայրերի ու մայրերի անցած ուղին: Անտեղյակիդ կրկին տեղեկացնեմ, որ այստեղ ապրողներս ունենք պատմական առաքելություն՝ նախ անառիկ պահել մեր սուրբ հողը եւ, որ շատ կարելու է, երբեք ծնկի չզալ ոսոխի ու քեզ մնան խեղճատակների առաջ: Դա է մեր պատգամը այն երիտասարդներին, որոնց դու տեսնում ես պահակի դերում, մինչդեռ նրանցից յուրաքանչյուրը՝ առանց բացառության եւ առանց ծանուցման, պատրաստ է հարկ եղած դեպքում՝ րոպեներ անց, լինել սահմանագլխին: Տեղյակ էլ չես, որ Սյունիքը (հանձնի Կապանի) եղել է պատերազմական գործողությունների թատերաբեմ: Վստահ եմ, որ սուլեյման-յան ճարպուտ եւ օտարածին ազգանունով սարդիչիդ իմացությունն այս առումով տարրական իմացությունից էլ ցածր է: Դե հիմա արի ու սարդի՝ լռեցի տղա... Ուրիշների կողմից պատվեր կատարող երկու ոտքով է ընկնում թակարդ, իսկ եթե, այնուամենայնիվ, հաջողվում է Կապանից ճողոպրել, Գորիսում արդեն նրան «դիմավորում են»...

Դու ասա՝ հարյուր, ես ասեմ՝ մեկ: Նախ պետք է իմանալ՝ էդ ովքեր են այդ հարյուր սյունեցիները, որ իրապես չեն հասկանում իրենց վատ ապրելու պատճառները: Դե այստեղ դու՝ լռեցի, տաբաղաբաղաբարում ես, ասել է թե՛ թմբկահարելով ուրվագծում թամբալուքյանը՝ քեզ բնորոշ բառը: Եթե թամբալուքյան ծեծված բառը մեր մարզում ոչ միայն բառ է, այլեւ մարզային գաղափարախոսության հիմք, ասա խնդրեմ՝ ո՛ւմ նկատի ունես

որպես գաղափարախոս... Դեպքերն ու դեմքերը խառնել ես իրար՝ լռեցի սուլեյման-յան... Մենք ի՞նչ մեղավոր ենք, որ մուսուլման եւ գալիս, խոսում «իրենցից ոչինչ չեներկայացնող կապանցիներ»-ի մասին, թեեւ այդպիսիք մեր քաղաքում չկան, նույնիսկ ձեր մատնանշած հարյուր մարդկանց մեջ: Քո մեքերած «լանդի» բառակապակցությունն ուղղակի հեզմանք է կապանցիներին հասցեին, բայց ինչպես կասեմ վայ դասակարգ՝ ամեն ինչ ըստ հերթականության:

Անկեղծ ասած «բարդ ռելիեֆի» մասին քո գառաճանցումն ու մտորումներն այդպես էլ մնացին անհասկանալի: Խոսում ես մեռած հոգիների մասին եւ այնքան հեզմանքով, կարծես ինքդ մահկանացու չես, ախորժակով խոսում ես միջին ամերիկացու՝ երեք տարին մեկ աշխատանք որոնելու համար 300 կիլոմետրանոց միգրացիայի մասին՝ մեքերելով մի տեղ անընդմեջ ապրած եւ աշխատած պայմանական կապանցու ու մեկ ուրիշ կապանցու



Արսեն Գրիգորյան, Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գործառնակաբաժնի ճապատարաստության բաժնի պետ

աշխարհայացքի շեշտակի տարբերությունը, ով տարեկան գոնե երկու անգամ հանգստանում է արտասահմանում: Այստեղ դու արդեն բացում ես բոլոր փակագծերը: Տարեկան երկու անգամ արտասահմանում հանգստացող կապանցի չգիտեմ, բայց Կապանում աշխատող ոչ կապանցիներ գիտեմ, ովքեր ոչ միայն կարող են 2-3 անգամ իրենց թույլ տալ հանգստանալ արտասահմանում, այլեւ այդ նույն արտասահմանում ունենալ ամառանոցներ, դղյակներ... Քավ լիցի, այդ ճոխություններն ու շքեղություններն իմ անբիցիաներից շատ հեռու են, երբեք չեմ նախաձեռնել հայ հարուստին, հակառակը գիտեմ, որ նրանք էլ պետք է ունենան լուրջ դերակատարություն մեր երկրի՝ տվյալ դեպքում մարզի տնտեսական զարգացման մեջ: Ինչ ձեռք է բերվել արդար ու ազնիվ ճանապարհով՝ միայն ողջունել ու դրվատել կարող եմ եւ հակառակը...

«Ստաբիլությունը հաճախ կարող է վատ լինել» պատկերացումը օգտագործելով՝ ուղիղ համեմատական ես անցկացնում Սյունիքի ու նախապատկան Գերմանիայի ավանդույթների միջեւ եւ պերմանենտ անցում կատարում քեզ այդքան հետաքրքրող (արդեն անհավաստացնող) կոմբինատների մասին... Սուլեյման-յան էր չէ՞ քո ազգանունը. լսիր, թե ինչ եմ ասում. դու ճիշտ կանեիր սկսեիր հենց այդտեղից, քանզի Լոռիից կոմբինատը քեզ ավելի հրապուրող է եւ շատ ավելի տեսանելի, քան սյունեցու ազնվագույն կերպարը, ինչի վրա փորձում ես ցեխ շարտել: Խոսում ես ծծկեր երեխայի մասին՝ էլի օրինակ բերելով քո բուք դասականներից: Մի բան լավ իմացիր, լռեցի տղա, երեխան լացում է, երբ սոված է լինում. քո նմաններն ու քեզ թե տվողներն ի վիճակի չեն պատկերացնելու, թե ինչ է լեռնահանքային արդյունաբերություն. այնտեղ պետք է լի-

նի արհեստավարժը (քո ասած 40 տարեկան ենթադրյալ ու պոտենցիալ պահակը), ոչ պատահականը, ամենապահանջված կարգերը տեղացիները պետք է լինեն (տեղացի մեկը, եթե մասնագետ է, պետք է պարապ չլինի), ովքեր բոլորից շատ լավ գիտեն ընդերքից մինչեւ ֆլուտացիա, քանզի գիտակցում են, որ մաքուր արտադրությունը երաշխավորում է իրենց ընտանիքների եւ շրջապատի, հասարակության համար առողջ ու մաքուր միջավայր... Վերջապես, ակնհայտ է, որ նրանք կարող են լինել արդյունահանման ծավալների աճը նախակամիտող զսպաշարակից (բառիս բարի իմաստով)... Եկուղիական հիմնախնդիրների, բանվորի, հանքագործի անվտանգության մասին պետք են ոչ թե պատկերացումներ, այլ ընկալումներ՝ դրանից բխող բոլոր դրական հետեւանքներով, մեծ ներդրումներ, որոնք կավելացնեն այդ նույն հանքագործի աշխատանքային կյանքի միջին տեղությունը: Էլ չեմ ասում զուգահեռ պաշտոններ վարողների

անապահովության, հարեւանի գեղեցիկ կնոջ վրա աչք դնելու մասին երեւակայությամբ քո մութ ու սեւ գործն անել՝ անկատար լռեցի... Փորձում ես նույնիսկ սեպ խրել կապանցու ու գորիսեցու միջեւ: Քո էժանագին ու մթագնած մտքերը մի բացահայտիր, սյունեցիներս թասիք ու արժանապատվություն ունենք, ուղղակի կասեի հետեւյալը՝ թամբալուքյանը՝ թամբալուքյան, բայց ՍՏՈՐԱՔԱՐԸ ՀԱՄԱԼՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՄԻՏՔԸ, ԻՐԱՎԱՄԲ, ԲՈՒՆՈՐ ԱՐԱՍՆԵՐԻ ԱՆՔՆԵՆԵԼԻ ԹԱՊՈՒԻՅԵՆ ԵՆ:

Իմիջիպալոց՝ որակի մասին: Մարզկենտրոնում ամորակ է միայն մի բան՝ գնա ու որոնիր, եթե չգտնես պատասխանը՝ կստանաս միանգամից... կամ կուղղարկեմ իմ խաչքառը:

Միամիտ լռեցի ձեւանալով խոսում ես պահակի հաստիքի մասին իբր 40 տարեկան երիտասարդները (խոսքը կապանցիների մասին է) ամբիցիոզ չեն եւ ձգտում են ընդամենը պահակ աշխատել կոմբինատներից մեկում: Այո, պահակ էլ չեն կարող աշխատել, որովհետեւ Սյունիքը զբաղվածությամբ առումով հանրապետությունում հայտնվել է ամենատարած դիրքում, որովհետեւ քո նմաններին են տեղավորում կոմբինատներում, այդ կոմբինատների ղեկավարների դռները կապանցիների համար փակ են ու փակ: Մինչդեռ արի ու տես՝ մայրաքաղաքից եկած որքան մարդ է տեղավորվել կոմբինատներում, որտեղ են բնակվում, ինչ արտոնություններից են օգտվում եւ շուրջերկրյա ինչ գործուղումների մեջ են: Կոմբինատներում, լռեցի տղա, ասեմ, որ աշխատելու համար նախ պետք է լինես ոստիկան (թեեւ ոստիկաններից շատերին են նարգում) կամ ազգային անվտանգության նախկին աշխատակից կամ էլ նրանց սպասարկող:

Ինչ ինքնագնահատականի պարադոքսի մասին ես փիլիսոփայում... Լեզուների մասին խոսողիդ հարկ եմ համարում հիշեցնել՝ նախ պետք է իմանալ մայրենի լեզուն, որը Կապան թափանցած անձանց շատերի մեջ չնկատեցի, սիրել սեփական ժողովրդին, չփորձել տարանջատել կապանցուն եւ գորիսեցուն, ձեզ մնան չուտել ու թթել այն ամանի մեջ, որից եկել ու օգտվել ես:

Եկար ու հասարակական ստանդարտներին համապատասխանող խոհարարին: Կուրկուտի՞ց էլ ես դժգոհ... Լավ, մի դրական բան երեք անմալ ընթացքում լռեցիդ չտեսա՞մ, թե՛ սուլեյման-յանական կասկածելի ազգանվան թելադրանքով շարունակում ես սարդել. եկել էիր մարդաբանական ուսումնասիրություններ կատարելու, բայց... Ստորեւ՝ բերեմ իմ մեկնաբանությունը մտքի թամբալուքյան քո հերթական բարբառների մասին: «Սահմանափակ միտքը բոլոր վերոնշյալ թամբալուքյանների անքննելի թագուհին է». մեքերում քո խոսքից: Ասում ես Սյունիքում շատ են հանդիպել մարդկանց, ովքեր մայրում են ոտքերիդ տակ եւ ծուլանում են գլուխը բարձացնել ու տեսնել աստղերը: Ի հեճուկս քո շաղակրատանքի, նշեմ, որ քեզ հանդիպած սյունեցիները ցած էին նայում գուցե այն պատճառով, որ չտեսնեին թշվառիդ ողորկ գլուխը, որի ընդերքն (ըստ իս) լի է մակաբույծներով:

Ծավ գյուղի՞ քեզ հանդիպած հրաշալի մարդու մասին խոսելուց առաջ պետք է մտնեիր նրա տունը, ծանոթանայիր նրա կենցաղին, ոչ թե շնորհալի մարդուն մեղադրական ներկայացնեիր՝ տեսեք, տեսեք, ես նրան ուզում էի օգնել, բայց նա երախտամոռ դուրս եկավ, տրակտորը թողած՝ անարդարությունից էր խոսում, քանի որ ունեց գիտելիքների պակաս... Դու դա չես կարող հասկանալ, քանի որ քո ուշքն ու միտքը կոմբինատի, այդ կոմբինատի վրա էր, դու, վերջապես սկսեցիր հասկանալ, որ ինչ-որ վտանգներ են պարուրվում կոմբինատի վզին (ի դեպ, դա էլ մեր պրոբլեմն է, հանգիստ մնա)... Եթե «Սյունիքի գարգացման հիմնադրամ»-ի ղեկավարությունն արդեն իսկ տվել էր իր բանավոր համաձայնությունն այդ հրաշալի (այստեղ դու զգուշաբար շաղակրատում ես, գուցե հաճոյանալու համար) մարդուն սատար կանգնելու համար,



Նախկին ոստիկանը մեղադրում է Կապանի ոստիկանության պահպանության բաժնի պետ Արտաշ Մարտիրոսյանին

Խմբագրություն եկած այցելուն ձեռքին հսկա ցուցապատում ունենալով, եւ դա մեզ համար բնավ էլ անակնկալ չէր: Քանզի ոստիկանության նախկին աշխատակից, չորս անգամ հաս երեխայի հայր Աշոտ Մկրտչյանը վերջին ժամանակներս Կապանում բողոքի ակցիաներ է անում՝ ոստիկանական համագործակցության եւ ցուցապատառով, որում շարադրված են նրա պահանջները: Համաժողովրդական ընդվզման օրերին եւս նա կապանցի ցուցարարների հետ էր, բայց իր պահանջներով ու ցուցապատառով: Իսկ ավելի վաղ՝ 2017թ հոկտեմբերի 25-27-ը, Գարեգին Նժդեհի հրապարակում հացադուլ էր հայտարարել, որից դուրս եկավ Սյունիքի մարզպետի հորդորով: Ավելի ստույգ, երբ վերջինս փոխհատուցեց հացադուլավորի օգտագործած բնական գազի եւ էլեկտրոհայի վնասները: Օրեր առաջ՝ հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, նստացույց է արել Կապանի ոստիկանության առջեւ՝ մեղադրելով Կապանի ոստիկանության պահպանության բաժնի պետ Արտաշ Մարտիրոսյանին հանցագործության մեջ՝ իր 4 անչափահաս երեխային վնաս հասցնելու համար:



Աշոտ Մկրտչյան

ոստիկանության ներքին անվտանգության աշխատակից, Դավիթ Կարապետյանը՝ ոստիկանության պոլիլինիկայի տնօրեն, Ա. Հակոբյանը՝ Ավանի նյարդահոգեբուժական կենտրոնի տնօրեն, Վարդան Մինասյանը՝ ոստիկանության ՊՊԳ նախկին վարչության պետ: Նա տարօրինակ է համարում այն, որ երկու ամիս ծառայության չի ներկայացել, սակայն որպեսզի մարդիկ պատասխանատվության չենթարկվեն, առանց աշխատունակության թերթիկ ներկայացնելու, միանվագ երկու ամսվա աշխատավարձ են տվել:

Հետաքրքիր նրբերանգներ ունի նաև առողջությունը կորցնելու պատմությունը: Ամեն ինչ սկսվեց ատամից:

Մեր զրույցի ժամանակ նա պնդում էր, որ իր ատամը բուժելու փոխարեն ոստիկանության պոլիլինիկայի բժիշկներն ավելի են բարդացրել իրավիճակը՝ սխալ բուժումներ իրականացնելով: Ատամը բորբոքվել էր. Կապանի պոլիլինիկայի բժշկից ուղեգիր է վերցրել եւ մեկնել մայրաքաղաք՝ ոստիկանության պոլիլինիկայի բուժօգնում անցնելու եւ իր դեկավարին՝ Արտաշ Մարտիրոսյանին ցույց տվել երեսն գնալու ուղեգիր ու տեղեկացրել, որ գնում է բուժման: Երբ ոստիկանության պոլիլինիկայում հեռացրել են ատամը, դրանից հետո լնդից անդադար թարախ է հոսել, օրեր հետո սկսել է քթից հոսել: Բժշկական սխալները հարթելու այլ ելք չունենալով՝ Աշոտ Մկրտչյանը դիմում-ճանաչում է գրում ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին, որ անուշադրության է մատնված, բժիշկները պատշաճ բուժում չեն կատարում, որ կարողանա հետ վերադառնալ աշխատանքի: Նաեւ պնդում էր՝ բժիշկների սխալ բուժման պատճառով է վատթարացել իր առողջությունը: Նա չի կարողանում իրեն հատկացված արձակուրդի ընթացքում բուժվել եւ հետ վերադառնալ աշխատանքի, որի պատճառով նրա նկատմամբ սկսվում է ծառայողական քննություն:

Բայց սա ամենը չէ. պարզվում է, որ իր պետը երկու զեկուցագիր է գրել. մեկն ուղղված է եղել ոստիկանության պոլիլինիկայի տնօրենին, որով տեղեկացրել է, թե Աշոտ Մկրտչյանը չի ներկայանում ծառայության: Մյուս զեկուցագրով ՊՊԳ վարչության պետին հայտնում է, որ Աշոտ Մկրտչյանին պետք է ուղարկել

կել նյարդաբժշկական կենտրոն՝ հետազոտության՝ հետագա ծառայությունը չի ստացնողներին համար, քանի որ ոչ աղեկվատ պահվածք է ցուցաբերել: Ծառայողական քննությունն իրականացնող ՊՊԳ վարչության աշխատակից Արտակ Արամյանն Աշոտին տեղեկացրել է, որ գնում են ընդհանուր ստուգման: Ի վերջո նրան տարել են Ավանի հոգեկան առողջության կենտրոն, որտեղից հետագայում եզրակացություն են տվել՝ թե «Անձի պարանոիդ խանգարում հայցանով դրսևորումով», ինչն էլ առիթ է դարձել չորս անպաշտպան երեխայի հորն աշխատանքից ազատելուն:

Արդարությունը պահանջում է ասել, որ ընդհանուր առմամբ դրականորեն բնութագրվող Աշոտ Մկրտչյանի ծառայողական բնութագրից՝ տրված ոստիկանության պետական պահպանության զխավոր վարչության Կապանի պահպանության բաժնի պետ Արտաշ Մարտիրոսյանի կողմից, տեղեկանում ենք, որ 2016թ. հունվարին քաղաքացիների նկատմամբ քաղաքակիրթ եւ հարգալից վերաբերմունք չցուցաբերելու փաստով հայտարարվել է «խիստ նկատողություն»: Եվ սրան հետևում է. «Տույժից հետո նա հետևություններ չի արել ու շարունակում է անկիրթ վերաբերմունքը քաղաքացիների նկատմամբ: Անհիմն վիճաբանության մեջ է մտնում վերադասի հետ: Հաճախ է գիտակցում իր գործողություններից բխող հետևանքը»:

Ինչեւէ, Աշոտ Մկրտչյանը դիմել է տարբեր ատյաններ, ընդհուպ մինչեւ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ինչպես ներկայացնում է, իր խաթարված իրավունքների վերականգնման համար: Դիմում է հղել ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին, նրա խնդիրներին անդրադարձել է «Առավար» օրաթերթը՝ «Նախկին ոստիկանի երեք երեխաներն այս տարի դպրոց չեն գնա» վերտառությամբ հրատարակմամբ: Ընդհանրապես նրան վերաբերող մյուսերը մի հաստ թղթապանակ են կազմում: Մի այլ հրատարակում էլ եղել է «Հետք» կայքում՝ «Ոստիկանության նախկին աշխատակիցը պնդում է՝ աշխատանքից ազատվել է բժիշկների սխալ բուժումների ու եզրակացության հիման վրա» վերտառությամբ:

Աշոտ Մկրտչյանը հաստատ համոզված է, որ ինքը հանդիսավոր պարտավոր է. «Լավ, սխալ եմ, ինչո՞ւ ինձ զրկել են բնակարան ստանալու իրավունքից, ինչո՞ւ ինձ չեն հետազոտել՝ հիվանդ եմ, թե՞ ոչ: Շատ բաներ կարող են ճշտել ծառայողական քննությամբ»:

Հիմա էլ մտադրություն ունի բողոքի ակցիաներ անել մայրաքաղաքում, մասնավորապես, ՀՀ ոստիկանության շենքի մոտ: Պահանջում է ծառայողական քննություն անցկացնել՝ հիմնավորելու ոստիկանությունից իրեն ազատելու հիմքերը: Արդարության հասնելու մյուս ուղին դատարան դիմելն է, բայց իր ասելով՝ այդ ճանապարհին իրեն ձեռք չի տալիս, քանզի տեղյակ է դատական քաջքուններից, այդ առիթով հավելում է՝ երեխաներս սովի կմատնվեմ: Եվ իրոք, այս ամբողջ պատմության մեջ ամենատխուրն այն է, որ տուժում են Աշոտ Մկրտչյանի անմեղ երեխաները՝ երեքը՝ դպրոցական, չորրորդի երկու տարեկանը դեռ չի լրացել...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

պե՞տք էր արդյոք այդ մասին բարձրաձայնել, թե՞ «փիար» էիր ուզում անել: «Ձանգեզուր պրես» մարզային շաբաթաթերթի մասին... Այդպես էլ չդարձա այդ թերթի ընթերցողը: Եվ զարմացած եմ, որ կապանցիներին արատավորելու համար հենց այդ թերթն էս օգտագործել: Ուրիշ հարթակում չէիր կարող հողվածոց հրապարակել: Ափսոսում եմ, որ կանաչ լույս բացվեց քո թյուրըմբռնումների առաջ, կրկնակի ափսոսում, որ մինչ օրս քեզ ոչ ոք հրապարակավ չփնտրեց, թեեւ հասկանալի է՝ թերթը հասու չէ մտավորական զանգվածի այն շրջանակին, որ կարող էր նվաստիդ պորտը տեղը դնել... Թերթին հանձնած քո մտքի «գոհարները» համապատասխանում են Բուրկինա-Ֆաստյի՝ արեւի տակ պապանձված, ուղեղի որդերի ձեռն ընկած, տոչորված հոգուց հեւոցների մեջ շարունակված առաջադր սնանկ ու անողնաշար թշվառի անբանականությանը. վերջապես, հորդորում եմ շարունակիր մարկոպոլյան քո շրջագայությունները Սյունիքի վարչական սահմաններից դուրս, թե չէ իմ մեջ այնպիսի տպավորություն է ձեւավորվում, որ դու խոսել ես ոչ թե սյունեցու կամ կապանցու մասին, այլ հայի մասին ընդհանրապես, որի հանդեպ ատելությունը չկարողացար

զուպել, որի պատճառը գուցե եւ քո ազգանվան արմատների մեջ է... Հիշիր մեկընդմիջտ, Սյունիքում բուրդը չէ, որ ընթերցում են այդ թերթը, այն հասու է եւ պետք է միմիայն կոմբինատներից ու այն կազմակերպություններից, ովքեր լրացնում են 2000 տպաքանակով հայտը: Համոզված եղիր, եթե ես քո թերթը ձեռքս առա միայն այս պատրվակով, ինչպիսի բանն արդեն բուրդ ա: Սյունիքում, փառք Սստոծ, արդեն երկար տարիներ է կա այնպիսի մի պարբերական, որքան էլ որ այն արգելված համարվի (ես այդպես չեմ կարծում), միեւնույնն է, իր արժեքով ու փաստավավերագրական համեղ ու դյուբիջ մյուսերով, խոսքի մակարդակով ու ոճով ուղղակի ոսկի արծե... Թերթն այդ իմ համար «ԿՇԵՆՔ»-ի նշանակություն ունի, քանզի նժարի վրա է դնում չթյուրըմբռնվող փաստերը, երեսույթները, ընդ որում ոչ թե հանուն մեկի, այլ հանուն նորից գերազանցություն արդարության, պատվի, խղճի, հրապարակված մյուսերի արժանահավատության. այստեղ արդեն ենթատեքստեր չեն կարող լինել, այն քո ասած մունձաթներից, սարդաքներից ու թամբալություններից հեռու է եւ լրատվական մեթոդյա խայտաբղետ հարթության մեջ պատվով կատարել, կատարում եւ կկատարի սանիտարի իր վեհ առաքելությունը:

Այսպեղ հագենում է երեխաների ծարավը

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Գորիսում կազմակերպված «Մանկության մոլորակ» միջոցառման շրջանակում Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի ստորաբաժանումում բացվել էր ցուցահանդես: Գեղագիտության այս օջախ հաճախում է 5-18 տարեկան 184 երեխա: Այստեղ նրանք հաղորդակցվում են գեղեցիկի հետ, բացվում են նրանց հոգու թեւերը, եւ սպիտակ թղթի վրա ուրվագծվում է ապագա նկարի 1-ին շտրիխը, հետո՝ 2-րդը, 3-րդը... Արիեստավարժ կուլետիվի ջանքերի շնորհիվ երեխաների մտքի սլացքն ու երեւակայության գունեղ թռիչքները միախուսվելով իրար՝ դառնում են նատյուրմորտներ, դիմանկարներ... Ժամանակն ասես այստեղ չարաճճի պար է բռնել վրձնի հարվածների հետ՝ տանելով իր խորքը, ուր այս երեխաների իրական արմատներն են. ահա ազգային տարազով տատկվել ու պապիկը, ահա սայլը, որին նստած տուն է վերադառնում հեծվորը, ահա... Ասում են տան գաղտնիքը երեխայից իմացիր: Եվ ազգի պատմության ու գեղի մասին պատկերացում են տալիս երեխաների նկարները: Դրանք «խաբարեզիկ» նման ամեն ինչ պատմում են ազգի գեղի ու երազանքների, պատմության մասին, բացառապես մուսիկաների անհիմանակն եւ բացահայտման բացառապատիչը նկարները, այնքան խոսում են, անկեղծ: Եվ ազգային ոգի կա նկարներում, եւ զարթոնք, եւ պոռթկում, եւ մաքրություն ու աղբյուրի ջրի նման զուլալություն: Եվ ցուցահանդեսի ամեն մի նկար մի աղոթք է

առ ազգի լինելիություն, առ ազգի հերոսական ոգի: Ճարտարապետ Սեւադա Ջաքարյանը թե՛ գեղագիտության կենտրոն ամեն տեղ կարող է բացվել: Բայց դա կրթօջախ չէ, այն կրթօջախ է դառնում, երբ գեղագիտական դաստիարակությունը ճիշտ հիմքերի վրա է դրվում: Ստորաբաժանումում ղեկավար Արամ Մաշուրյանին դա հաջողվել է: Կրթության պակասը չարիք է: Իսկ այստեղ կրթության պակաս չկա: Ա. Մաշուրյանը կարողացել է ստեղծել մի այնպիսի կրթօջախ, ուր երեխաները ոչ միայն սիրով են հաճախում, այլև բարձր մակարդակի գեղագիտական կրթություն ստանում: Տեղ գյուղից երեխա է գալիս այստեղ, դա տվորական բան չէ, դա նշանակում է, որ երեխան այստեղ գտել է իրեն, գտել գեղագիտական կրթություն ստանալու այն երակը, որից սնվելու է: Եվ օր-օրի գալիս եւս համոզման, որ այս շենքի 2-րդ հարկի կառուցումն անհրաժեշտություն է: Մեկ հարկանի շենքը հարիր չէ Գորիսի ճարտարապետական տեսքին: Քաղաքաշինական իմաստով 2-րդ հարկը պետք է կառուցվի, եւ դրսի պատը պետք է Գորիսի շարվածքով լինի: Ես արդեն չափազանց եմ, գծագրել, 2-րդ հարկի նախնական էսքիզն արդեն կա: Ինձ ոչ մեկը չի ասել, որ ես այդ գործը կատարեմ, կատարել եմ կամավոր հիմունքներով՝ կանոն Գորիսի :

Ցուցահանդեսում ներկայացված նկարները մայիսի 31-ից իր պրիզմայով անցկացնում-գնահատում է

Սյունիքում չկա «Զանգեզուր TV», կա «Սոսի» հեռուստաընկերություն, որը զավթել ու անվանափոխել է Վահե Հակոբյանը՝ իր փկնոջ՝ Էլիզաբեթի հետ **Նամակ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Գագիկ Բունիաթյանին**

Հարգելի պարոն Բունիաթյան

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի համաձայն 2011 թվականին անցկացված մրցույթում (Սյունիքի մարզում) հաղթող է ճանաչվել եւ հեռուստաօրագրերի եթերային հեռարձակման լիցենզիա ստացել «Սոսի» հեռուստաօրագիրը (հիմնադիր՝ «Զագեծոր» ՍՊԸ):

Լիցենզիան տրվել է տասը տարով, սակ է թե՛ ուժի մեջ է մինչեւ 2021 թվականը:

Սակայն, որքան էլ տարօրինակ է, մի քանի ամիս առաջ, «Սոսի» հեռուստաօրագրի փոխարեն եթեր է հեռարձակվում Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի եւ նրա տիկնոջ՝ Էլիզաբեթի, ընտանեկան «Զանգեզուր TV» հեռուստաօրագիրը:

Այդ հարցը, որի վերաբերյալ մինչեւ հիմա որեւէ բացատրություն չի տրվել, ամիսներ շարունակ եղել ու մնում է քննարկման առարկա Սյունիքում:

Ուզում ենք Ձեր օգնությամբ պարզել՝ ի՞նչ է իրականում տեղի ունեցել:

Տեսականորեն չենք բացառում, որ «Սոսի» հիմնադիր «Զագեծոր» ՍՊ ընկերության սեփականության իրավունքն անցել է Վահեին ու Էլիզաբեթին կամ նրանց դրածոներից մեկին:

Ենթադրում ենք, որ հենց այդպես էլ կլինի Ձեր պաշտոնական պատասխանը: Սակայն դա այլ հարց է, եւ մենք կփորձենք պարզել, թե ինչպես է, այնուամենայնիվ, սեփականատիրոջ փոփոխություն կատարվել «Սոսի» հիմնադիր կազմակերպությունում: Առաջ անցնելով ասենք, որ, ըստ Սյունիքում շրջանառվող խոսակցությունների, «Սոսի» հիմնադիր ընկերությունը բռնազավթվել է օրինական տիրոջից, ինչը Դուք, մեղմ ասած, «չեք նկատել» կամ նկատել ու կարելություն չեք տվել:

Բայց Ձեզ հետ կապված այլ հարցեր ունենք:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը սահմանում է (հոդված 46, 2-րդ կետ), որ «**Հեռուստառադիոօրագրերի եթերային հեռարձակման լիցենզիան տրվում է մրցութային կարգով՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակելու համար հայտարարվող հեռուստաընկերությունների մրցույթից հետո...**»:

«Զանգեզուր TV»-ն 2011-ին չի մասնակցել հեռուստաընկերությունների մրցույթին՝ հետևաբար՝ եթերային հեռարձակման լիցենզիա չունի եւ չի կարող ներկայումս ունենալ:

Իսկ «**Լիցենզիան միակ օրինական հիմքն է, որ թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել հեռուստառադիոօրագրերի հեռարձակում...**» (վերը նշված օրենքի հոդված 46-ի 1-ին կետ):

Եվ ուրեմն՝ ինչպե՞ս հասկանալ իրողությունը, որ «Զանգեզուր TV»-ին հեռարձակվում է Սյունիքում, այն էլ՝ «Սոսի» փոխարեն:

Մենք տեղյակ ենք, որ թվային հեռարձակման միջոցով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում եւ երեսուն քաղաքում հեռարձակում է իրականացնում ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող մեկական տարածքային



սփռման մասնավոր հեռուստաընկերություն:

Մի պահ անտեսենք իրականությունը եւ ենթադրենք, որ Վահե ու Էլիզաբեթն օրինական ճանապարհով են տիրացել «Զագեծոր» ընկերությանը:

Այդ դեպքում... Արդյո՞ք գործող օրենքը հնարավորություն է տալիս, որ այդ ընկերությունը եթերային հեռարձակում իրականացնի «Զանգեզուր TV» ծրագրով:

Պարզազույն ճշմարտություններ են ֆիքսված «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում, որն ակնհայտորեն անտեսվել է այս դեպքում:

Տեսե՛ք «Զագեծորը» մրցույթի է ներկայացել «Սոսի» հեռուստաօրագրի թեմատիկ ուղղվածությամբ, սեփական արտադրության հաղորդումների, հայրենական արտադրության հաղորդումների գերակայության երաշխաբերով ու ծրագրով: Եվ «Զագեծորը» մրցույթում հաղթող է ճանաչվել հենց «Սոսի» ներկայացրած ծրագրի համար:

Յենց այդ ծրագրի համար էլ տրվել է լիցենզիա: Մինչդեռ այլ բան է ստացվում. «Զագեծորին» տրվել է լիցենզիա «Սոսի» հեռուստաօրագիրը եթեր հեռարձակելու համար, իսկ եթեր է սփռվում «Զանգեզուր TV»-ի ծրագիրը, որը չի ներկայացվել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողով, որը չի մասնակցել մրցույթի, որը լիցենզիա չի ստացել, որը հեռարձակվում է միայն այն պատճառով, որ Վահե ու Էլիզաբեթը կին-տանիք, ինչպես եւ Քաջարանի կոմբինատ ստուճում...

Մի քանի կարեւոր հիշեցում ենք ուզում անել: Նախ՝ «... թվային հեռարձակման ցանցը Հայաստանի Հանրապետության սեփականություն է» (վերը նշված օրենքի հոդված 47-ի 2-րդ կետ):

Եվ փաստորեն Հայաստանի Հանրապետության սեփականությունն այս դեպքում տնօրինվել է քմահաճորեն:

Երկրորդ՝ իրականում տեղի է ունեցել լիցենզիայի գիշում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձի, որը լիցենզիայի

գործողության դադարեցման հիմք է (նշված օրենքի հոդված 61-ի 5-րդ կետ):

Երրորդ՝ հայտնաբերվել է կեղծ կամ խեղաթյուրված հանգամանք՝ լիցենզիան օգտագործելու համար էական նշանակություն ունեցող:

Վերելում արդեն նշեցինք, թե որն է կեղծ կամ խեղաթյուրված հանգամանքը:

Պարզված չէ, թե ինչպես է փոխվել «Սոսի» հիմնադիր «Զագեծորի» սեփականատերը: Իսկ մենք պնդում ենք՝ Սյունիքում շրջանառվում է տեսակետը, որ Վահե ու Էլիզաբեթն այդ ընկերությունը զավթել են օրինական տիրոջից, հանգամանք, որը չի ուսումնասիրել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը:

Եվ ի՞նչ ունենք այդ ամենի հետևանքով:

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի, նրա նախագահ Գագիկ Բունիաթյանի ակնհայտ թողտվությամբ Սյունիքի մարզը գրկվել է թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային մեկ հեռուստաընկերություն ունենալու հնարավորությունից, որի իրավունքն ունեն է ունի մարզը՝ համաձայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 47-ի 7-րդ կետի:

Սյունիքի մարզի բնակչությանն է հրամցվում ինչ-որ «Զանգեզուր TV»-ի ծրագիր, որը, իրավական որեւէ հիմք չունենալուց զատ, քիչ աղերս ունի տարածքի բնակչության իրական հետաքրքրությունների հետ, ինչը նույնպես կարելու պայման է՝ սահմանված օրենքով:

«Զանգեզուր TV»-ին ապօրինաբար եթեր մտնելու առաջին իսկ օրվանից սպասարկում է բացառապես Վահե-Էլիզաբեթ գույզի ընտանեկան շահը, ինչը կապ չունի ո՛չ Սյունիքի, ո՛չ Հայաստանի Հանրապետության շահերի հետ:

Ստեղծված իրավիճակն ունի պարզագույն եւ անսակարելի էլք՝ ա) Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը ծառայողական հետաքննություն է սկսում պարզելու, թե ինչպես են Վահե Հակոբյանն ու Էլիզաբեթը տիրացել Սյունիքի մարզային «Սոսի» հեռուստատեսությանը, բ) անհապաղ դադարեցվում է «Զանգեզուր TV» չլիցենզավորված ծրագրի եթերային հեռարձակումը, գ) Սյունիքի մարզում վերականգնվում է գործող օրենսդրությամբ անցկացված մրցույթում հաղթող ճանաչված «Սոսի» հեռուստաօրագրի հեռարձակումը:

Եվ, իհարկե, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը պետք է քննություն նախաձեռնի՝ պարզելու, թե ինչպես են Վահե ու Էլիզաբեթը (կամ նրանց դրածոներից մեկը) դարձել «Զագեծոր» ՍՊ ընկերության սեփականատեր:

Հարգելի պարոն Բունիաթյան

Սկա այն, ինչ որ կամեցա Ձեզ ասել իրապարակա՛վ՝ ակնկալելով կոնկրետ քայլեր Սյունիքում մարզային եւ օրինական հեռուստահաղորդումը վերականգնելու գործում:

ՍՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Այուրյաց երկիր» թերթի խմբագիր
17 մայիսի 2018թ.

Տանձավեր գյուղի բնակիչները վարչապետի միջնորդությունն են հայցում



Մայիսի 21-ին «Այուրյաց երկիր» խմբագրությունն են այցելել Տանձավեր գյուղի մի խումբ բնակիչներ՝ Վուրդյա Հակոբյանի գլխավորությամբ: Ավելի ուշ հեռախոսով գյուղացիների մտահոգությանը միացել է Կապան համայնքի Տանձավեր գյուղի վարչական ղեկավար Մարտին Թու-

մանյանը: Գյուղացիները խմբագրություն էին եկել լրջագույն մի մտահոգությամբ: Կապանի տարածաշրջանի այդ ենթաշրջանի ավտոճանապարհը տեւական ժամանակ գրեթե ամանցանելի է ու շարունակում է մնալ այդ վիճակում:

Դարուփոսերը, քանդվածքներն այնքան շատ են ու խորը, որ միայն «Վիլիս» կամ «Նիվա» մակնիշի մեքենաներով, ինչպես եւ տրակտորով կարելի է հաղթահարել դժվարություններն ու տեղ հասնել:

Իսկ այդ ճանապարհից օգտվում են Տաթև, Սվարանց, Տանձատափ, Քաշունի (Մալդաշ), Աղվանի, Տանձավեր, Վերին Խոտանան գյուղերի բնակիչները:

Ճանապարհն այն աստիճան դժվարացնում է, որ մարդիկ ուղղակի գրկվել են մարզկենտրոնի հետ նորմալ հաղորդակցվելու հնարավորությունից:

Տանձավերցիները հիասթափված ու զարմացած են տեղական ու տարածքային իշխանության անգործությունից ու անտարբերությունից:

ՏԻՄ ընտրություններից հետո, երբ Կապանի տարածաշրջանը հիմնականում միավորվեց մեկ բազմաբնակավայր համայնքի մեջ, համայնքապետ Աշոտ Հայրապետյանը գոնե մեկ անգամ չբարեհաճեց այցելել համայնքի մեջ մտնող այդ գյուղեր:

Իսկ մարզպետը... Պաշտոնավարման ամբողջ ընթացքում ընդհանրապես չի եղել այդ բնակավայրերում, մարդիկ նրան չեն էլ ճանաչում: Հավանաբար չգիտի էլ, որ մնան ենթաշրջան կա Կապան համայնքում:

Ըստ տանձավերցիների՝ ենթաշրջանի գյուղացիները (մինչեւ համայնքների խոշորացում) մի անգամ միասին մտել են Վահե Հակոբյանի մոտ եւ խնդրել նրա աջակցությունը՝ հնարավորինս կարգավորելու ճանապարհը, բայց մարզպետը զայրացել է ու հորդորել, որ այլևս նման հարցերով իրեն չանհանձնատացնեն:

Վերջին անգամ 2013-ին Մաքսիմ Հակոբյանն է ժամանակավոր լուծումներով կարգավորել ենթաշրջանի ճանապարհը:

Ավելի ուշ կապանաբնակ գյուղացիներն են առավել անանցանելի փոսերը հողով լցրել, բայց հորդառատ անձրևներից հետո նորից փոսերն ազատվել են հողային շերտից:

Տեսնելով, որ համայնքային ու մարզային իշխանություններն ինք-

նանկուսացվել են այդ գյուղերի հոգսերից, տեսնելով, որ իշխանավորներին այլևս չի հետաքրքրում ենթաշրջանի ճանապարհների վիճակը, գյուղացիները դիմում են Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ միջամտելու Վերին Խոտանանի ենթաշրջանի ճանապարհի (Շրվենանցի խաչմերուկից սկսած) վերանորոգման հույժ կարեւոր խնդրի լուծմանը:

Տանձավերցիներին մտահոգություն պատճառած ճանապարհը, խոստովանենք, ռազմավարական նշանակություն ունի: Դա Գորիս-Կապան այլընտրանքային ճանապարհն է, որը կրցախայան պատերազմի դժվարին օրերին, առանց չափազանցության, կյանքի ճանապարհ էր Կապանի եւ Մեղրու շրջանների բնակիչների համար:

Այնպես որ՝ գործ ունենք հանրապետության հարավային շրջանների համար իրոք որ ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի անմխիթար ու գրեթե անանցանելի վիճակի հետ, որը, կարծում ենք, պետք է արժանանա հանրապետության կառավարության ուշադրությանը:

«Այուրյաց երկիր»

Պարգևները հանձնվեցին փերերին



Կապանի մանկական արվեստի դպրոցի դասատուներն ու սաներն անցնող ուստարին անցկացրին հիմնանորոգված ու նորովի կահավորված մասնաշենքում: Նույնքան նորոգ դահլիճում տեղի ունեցավ կրթօջախի սաների 2017-2018 ուստարվա հաշվետու համերգը: Օրեր առաջ Ալ. Շիրվանզադեի անվան պետքատրոնի բեմահարթակում տեղի ունեցավ դպրոցի պարարվեստի եւ թատերարվեստի բաժինների սաների միացյալ համերգը: Իսկ սեփական հարկի տակ հանդես եկան կրթօջախի մյուս բաժինների սաները: Մինչ այդ կրթօջախի տնօրեն Մարինա Նահապետյանը փառատոն- մրցույթներում դափնեկրի կոչում նվաճածներին հանձնեց դիպլոմներ եւ մեդալներ. «Վերածնունդ» միջազգային մրցույթ- փառատոնում «ժողովրդական գործիքներ» (շվի) անվանակարգում Հայկ Սանգասարյանը (դասատու՝ Ալեն Սահակյան) դարձել է երրորդ կարգի դափնեկիր: Առավել շատ են «Արտ- մյուզիք» միջազգային մրցույթ- փառատոնում աչքի ընկածները: «Ասմունք» անվանակարգում Շուշաննա Վեգի-րյանը (դասատու՝ Արթուր Գաբրիելյան) արժանացել է երկրորդ կարգի դափնեկրի կոչման: «Քանոն» անվանակարգում Սվետլանա Առաքելյանը դարձել է երկրորդ կարգի,

Ինեսա Աղամյանը՝ (դասատու՝ Թամարա Հայրույան) երրորդ կարգի մրցանակի: «Գունակար եւ գրաֆիկա» անվանակարգում Անահիտ Արզումանյանը ստացավ երկրորդ կարգի դիպլոմ, իսկ Նանե Պատվականյանը, Ռուզան Ավագյանը եւ Անդրանիկ Աղամյանը (դասատու՝ Բորիկ Մինասյան) ստացան երրորդ կարգի դիպլոմ: Այնուհետու դաշնամուրային, ժողգործիքների, մանկական ձայնի պահպանության բաժինների աշակերտները բեմահարթակի վրա դրսևորեցին իրենց կարողությունները, որոնք անտարբեր չթողեցին հանդիսականին: Նրանք հանդես եկան հայ, ռուս, եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ: Համերգը եզրափակվեց դպրոցի երգչախմբի (ղեկավար՝ Մարինա Նահապետյան) կատարումներով: Հնչեց Ռ. Պետրոսյանի «Իմ ուսուցիչ», Ռ. Ամիրխանյանի «Թե մանկությունն արար աշխարհի», կրթօջախի օրհներգը Ա. Ղազարյանի «Հզոր Կապան» երգերը: Դպրոցի առաջին հարկի միջանցքում ցուցադրված էին կերպարվեստի բաժնի սաների աշխատանքները հիմնականում գունանկարներ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Կրթօջախի 65 փարին

Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի 2017-2018 ուստարվա հաշվետու համերգը նվիրված էր դպրոցի հիմնադրման 65-ամյակին: Կրթօջախի մուտքի մոտ փողային նվազախումբը մեղեդիներ էր հնչեցնում ստեղծելով տոնական մթնոլորտ:

Մինչեւ հաշվետու համերգը սկսվելը դպրոցի տնօրեն Լիլիա Վարդանյանը համառոտ անդրադարձ կատարեց կրթօջախի անցած ուղուն: Կապանի անդրանիկ երաժշտական դպրոցը հիմնադրվել է 1952-ի հոկտեմբերի 6-ին, այն ժամանակների համար դա մեծ իրադարձություն էր, քանզի Ջանգեզուրի տարածաշրջանում սկզբնավորվեց դեռահասների գեղագիտական, նախաեռաջ երաժշտական դաստիարակության գործը: Նորաբաց դպրոցի առաջին տնօրենը Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ Թորոս Լավչյանն էր, առաջին դաշնամուրային դասատուն՝ Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանի շրջանավարտ Էլենորա Խաչատրյանը:

1953-ից կրթօջախի մանկավարժական կազմը համալրվեց նոր ուսուցիչներով՝ Անժելա Հակոբյան (տեսական առարկաներ), Սուրեն Մարդանյան (ջութակ), Գառնիկ Խաչատրյան (ժողովրդական գործիքներ), Վոլոդյա Կուրդիմյան (ջութակ), ով 1958 թվականին նշանակվեց դպրոցի տնօրեն, 1966-ին դպրոցի տնօրեն է նշանակվել կոնսերվատորիայի շրջանավարտ, դպրոցի նախկին սան Ռոմեն Նահապետյանը, ուն պաշտոնավարության 27 տարվա ընթացքում դպրոցը հասավ լուրջ հաջողությունների, կապեր հաստատվեցին Լենինգրադի, Մոսկվայի, Տալլինի երաժշտական դպրոցների հետ, համերգային ծրագրերով հանդես եկան այդ քաղաքներ:



րում՝ դրսևորելով կատարողական բարձր մակարդակ: 1993թ. դպրոցի տնօրեն նշանակվեց Ռուզաննա Ավանեսյանը: Դժվարին ժամանակներում նա դեկավարեց կրթօջախը մուսու ու ցուրտ տարիներ: Սակայն կոլեկտիվը նրա ղեկավարությամբ պատվով դուրս եկավ այդ դժվարին կացությունից, դեռ ավելին՝ մասնակցելով մի շարք մրցույթ- փառատոների՝ ունեցավ լուրջ հաջողություններ: Հիմնադրման տարվանից մինչեւ այժմ դպրոցը տվել է երեք հազարից ավելի շրջանավարտ, որոնցից ոմանք ուսումը շարունակել են Լենինգրադի եւ Մոսկվայի երաժշտանոցների ասպիրանտուրայում: Բանախոսը թվարկեց դպրոցի լավագույն մանկավարժների եւ սաների անունները: Նանե Նրանց, ովքեր հաջողության են հասել երաժշտական մրցույթ-փառատոներում, նանե միջազգային: 1996-ին «Իմ անկախ հանրապետությունը 5 տարեկան է» մրցույթ- փառատոնում հաղթող ճանաչվեց դպրոցի երգչախումբը (ղեկավար՝ Ռուզաննա Ավանեսյան): 2002թ. դեկտեմբերի 5-ին դպրոցի հիմնադրման 50-ամյակի առթիվ Կապանի քաղաքապետարանի որոշմամբ դպրոցը կոչվեց Արամ Խաչատրյանի անվամբ: 2007թվականից Գյումրիում կազմակերպվող

«Վերածնունդ» ամենամյա փառատոնից (2009-ից դարձավ միջազգային) դպրոցի լավագույն սաները պարբերաբար վերադառնում են մրցանակներով: Դպրոցի պատմությունը ներկայացնելուց հետո Լիլիա Վարդանյանը «Վերածնունդ» միջազգային 10-րդ փառատոնի մրցանակներ հանձնեց դպրոցի աշակերտներ Մարտա Հայրապետյանին, դաշնամուր (դասատու՝ Էլենոբրա Աղավեսյան) եւ Գեորգ Իրիցյանին, ձայնի պահպանման բաժնի (դասատու՝ Անուշ Դավթյան): Այնուհետեւ կրթօջախի սաները եւ մանկավարժները հանդես եկան համերգային ծրագրով, որը սկսվեց դպրոցի երգչախմբի եւ ջութակահարների համույթի կատարումներով: Ապա հնչեցին Աննո Բաբաջանյանի, Շոտակովիչի, Վեյնյակի, Շոպենի, Վեբերի, այլ նշանավոր կոմպոզիտորների ստեղծագործություններ: Դպրոցի սաների կատարումները որոշակի պատկերացում տվեցին նրանց կատարողական կարողությունների մասին: Համերգը եզրափակվեց դպրոցի «Ջանգեզուր» դիոլահարների համույթի ելույթով: Այնուհետեւ հնչեցին շնորհավորանքներ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

«Ոչխարների խուզում 2018» փառատոն. հաղթողը Շինուհայրի բնակիչ է

Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրում գտնվող Սյունիքի Անասնաշուկայի տարածքում հունիսի 9-ին տեղի ունեցավ Ոչխարների խուզման հերթական թվով չորրորդ փառատոնը: Փառատոնին մասնակցեցին մարզի 12 համայնքի ներկայացուցիչներ, հաղթող ճանաչվեց Շինուհայր համայնքի ներկայացուցիչ Ռոմանոս Սարգսյանը, ով որպես մրցանակ ստացավ ծիու թամբ, խուզի մկրատ, խուզի մկրատի սրիչ եւ պատվոգիր: Նա ոչխարը խուզել էր 2 րոպե 30 վայրկյանում: Սյուն բոլոր մասնակիցները եւս ստացան պատվոգրեր: Փառատոնի նպատակն է առավել ճանաչելի դարձնել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի տեղական արտադրանքը, ավանդույթներն ու մշակույթը, ինչպես նաեւ նպաստել զբոսաշրջության զարգացմանը: Փառատոնի ծրագիրն ընդգրկել

էր ոչխարների արդեն ավանդական դարձած ձեռքով խուզման մրցույթ, տեղական համայնքների եւ արտադրողների մասնակցությամբ ցուցահանդես-տոնավաճառ, համերգային ծրագիր, լարախաղաց: Այս տարի փառատոնի հյուրերի համար ծրագրվել էին բազմաթիվ անակնկալներ եւ հազցած միջոցառումներ: Մասնավորապես, ներկա էին Մեծ Բրիտանիայից եւ հարեւան Վրաստանից հրավիրված փորձառու խուզանողներ, ովքեր առաջին անգամ Հայաստանում ցուցադրական դասընթաց են անցկացրել փառատոնի մասնակիցների եւ հյուրերի համար: Կազմակերպվել է ցուցահանդես-տոնավաճառ, որտեղ ուտեստների, խմիչքների եւ հուշանվերների վաճառքից բացի նաեւ իրականացվել է համտես: Հրավիրված պաշտոնատար անձանց թվում էին ՀՀ Նախարարու-

թյունների ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ եւ Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Լուկաս Գասսերը: Համերգով հանդես է եկել The Time Project խումբը, կազմակերպվել են ինտերակտիվ խաղեր, մրցույթներ, իսկ մրցանակաբաշխության արարողությունից հետո տեղի է ունեցել շուրջպար: Նկատենք, որ «Ոչխարների խուզում» փառատոնն անցկացվում է լայն ճանաչում է ձեռք բերել ԱՄՆ-ում, Շոտլանդիայում, Նոր Զելանդիայում, Իռլանդիայում եւ այլն, սակայն ի տարբերություն այդ երկրների, որտեղ ոչխարներին խուզում են մեխանիկական սարքերով, Սյունիքում խուզումն իրականացվեց ավանդական ձևով՝ մկրատով:

NEWS.AM
10.06.2018

Այսօրը հագնում է երեխաների ծարավը

էջ 5
Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն Լեւոն Իգիթյանը: Եվ ցնցված է:

ների մտքի մեկնարկից երեւում է, որ մենք ազգային մեծ կապիտալ ունենք՝ շնորհիվ այս երեխաների տաղանդի: Գույների ինչպիսի զգացողություն ունեն գորիսեցի



Շատ հարուստ պետություններ մեզանից հետ են մնում: Մենք հսկայական զանձ ունենք: Իսկ այդ զանձն այստեղ հաճախող երեխաներն են, եւ այդ պետություններն այսչափ ու այս մակարդակի երեխաներ չունեն: Երեխա-

երեխաները, աներեւակայելի է դա, եւ դա չես կարող չփոթել այլ քաղաքների երեխաների հետ: Նրանք հետ չեն մնում մայրաքաղաքի երեխաներից: Եվ դա շնորհիվ Արամ Մաշուրյանի ղեկավարած կոլեկտիվի: Ցուցահանդեսն

ինձ նաեւ մտահոգվելու-մտորելու տեղիք է տալիս. հասարակությունը պատրաստ է ընդունելու այս գանձին: Իմ կարծիքով, համաշխարհային հոգեւոր հարթակում մեր ազգի տեղը դատարկ է: Այս երեխաները վաղը, մյուս օրը պետք է զբաղեցնեն այդ տեղը, դրա համար ազգն իր ձեռքն այս երեխաների վրա պետք է պահի, հովանավորի նրանց, նրանց

զարգացնելու համար պայմաններ ստեղծի: Ստորաբաժանման ղեկավար Արամ Մաշուրյանը մտովի արդեն այնտեղ է՝ համաշխարհային հոգեւոր այդ հարթակում: Նա հույսը չի կորցնում: Դժվար օրերը ձմռան մնան կզան ու կանցնեն, եւ ազգը ժամանակ ու հնարավորություն կունենա տաղանդավոր երեխաների համար ճանաչաբար ցուցաբերելու, եւ այդ

երեխաներն իրենց խոսքը կասեն նկարչության ասպարեզում: Ուստի կոլեկտիվը ոչ մի րոպե չի թուլացնում աշխատանքը, ամեն օր նորովի է արվեստի աշխարհի դռները բացում երեխաների առջեւ: Հետեւաբար՝ երեխաներն այստեղ են գալիս գեղագիտական անհազ իրենց ծարավը հագցնելու համար:

ԱԼՎԱՐԳ ՄԵՍՐՊՅԱՆ

«Յրավիրում է Աշոտ Խաչատրյանը»



Մինչ ցածրաճաշակ երաժշտությունը շարունակում է հաղթարշավը, դասական երաժշտության նվիրյալները փորձում են մարդկանց մեջ անմար պահել բարձրակարգ երաժշտության կրակը: Երրորդ տարին անընդմեջ Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն, թավջութակահար Աշոտ Խաչատրյանը կազմակերպում է դասական երաժշտության երեկոներ: «Դեկտեմբերյան երեկոներ» եւ «Աշոտ Խաչատրյանը ներկայացնում է» խորագիրը կրող այդ միջոցառումների ժամանակ հնչում են հայ, ռուս եւ եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ընդ որում՝ համերգներում տեղացիների հետ ընդգրկվում են մայրաքաղաքից հրավիրված ծագումով կապանցի երաժիշտներ եւ այլ կատարողներ:

Մայիսի 30-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում տեղի ունեցած դասական երաժշտության համերգը մեկնարկեց հայ հոգեւոր երաժշտության գանձարանում հաստատուն տեղ գտած մի ստեղծագործությամբ՝ Մակար Եկմյանի «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականով՝ փոխադրված լարային քառյակի համար: Այնուհետեւ բեմահարթակում Կապանի արվեստի մանկական դպրոցի դասատուներ Իրինա Մովսիսյանն ու Մարինե Գալստյանն էին, ովքեր դաշնամուրով հնչեցրին Յոհաննես Բրամսի «Յունգարական թիվ 6 պարը»:

Վահագն Ստամբուլյանի անունը կրող դահլիճում չէր կարող չհնչել երգեհոնն ու Բախի աստվածային երաժշտությունը: Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի դասատու, դաշնակահար եւ երգեհոնահար Արմեն Աղաջանյանի նվագակցությամբ Աշոտ Խաչատրյանը հանդիսականին հրամցրեց Բախի սի-բեմոլ միմոր «Պրեյլուդը» «Լավ տենպե-րացված կլավիրից»:

Աշոտ Խաչատրյանի կազմակերպած դասական երաժշտության համերգներին հաճույքով է հանդես գալիս Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Վահե Փարսադանյանը, ով կատարեց Օտտոկար Նովաչեկի «Անընդհատ շարժում» ստեղծագործությունը (նվագակցող՝ Արմեն Աղաջանյան):

Ա.Խաչատրյանը, կազմակերպելով դասական երաժշտության երեկոներ, ջանում է, որ դրանց ընթացքում հնչեն երաժշտական տարբեր գործիքներ, որոնք, ցավոք, հուշ են դարձել կապանցիների համար: Դա էր պատճառը, որ այս համերգին հրավիրվել էր Երեւանի

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ քալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի հորոյահար Ռաֆայել Ոսկանյանը, ով հնչեցրեց Բենեդետտո Մարչելլոյի «Աղաջիոն»: Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոս, շեփոհար Սամվել Հայրապետյանը կատարեց Ալեքսանդր Հարությունյանի «Սկերցոն» (նվագակցող՝ արվեստի քոլեջի դասախոս Լիաննա Ստեփանյան):

Կոմիտասի «Կռունկը» վարպետությամբ հնչեցրին Վահե Փարսադանյանը, միջազգային մրցույթի դափնեկիր Անի Փարսադանյանը: Համերգի երգացանկում ընդգրկվել էր Մելիք Մավիսակալյանի բոլորի կողմից սիրված «Սյունի-տը»: Իսկ համերգի վերջում փոքր նվագախմբային տարբերակով կատարվեց «Աղաջիոն» Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետից: Ստեղծագործության կատարման ընդգրկված էին արվեստի քոլեջի դասախոս, կլարնետահար Արման Մկրտչյանը, ջութակահար, Կապանի արվեստի պետական քոլեջի շրջանավարտ, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանող Յուրի Բաղդասարյանը, Աբովյան քաղաքի Ջարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոցի դասատու, ալտահար Արիինե Մարկոսյանը:

Համերգի ավարտին Աշոտ Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման հովանավորներին՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովին, իր ընկերներին՝ թավջութակահարներ Հովհաննես Հովհաննիսյանին՝ ԱՄՆ-ից եւ Լեւոն Մուրադյանին՝ Պորտուգալիայից, նաեւ Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանին եւ կրթօջախի աշխատակազմին՝ համերգի կազմակերպման գործում անմիջական օջակցության համար:

- Կապանից միշտ հաճելի տպավորություններով են հեռանում, շատ երաժշտասեր քաղաք է, տասը տարուց ավելի է, ինչ լինում են այստեղ: Այս կազմով երկրորդ տարին է, ինչ մասնակցում են համերգին: Պատեհ առիթը բաց չեն թողնելու գովեստի խոսքեր հղել Աշոտ Խաչատրյանին, ով կապանցի հանդիսականին հնարավորություն է ընձեռնում հաղորդակցվելու դասական երաժշտության հետ: Մեզ համար հաճելի է ելույթ ունենալ երաժշտության հարգելիմացող հանդիսականի առջեւ, - «Սյունյաց երկրին» փոխանցեց դաշնակահար եւ երգեհոնահար Արմեն Աղաջանյանը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

«Պարի աստղեր» շուկա ստուդիան 25 տարեկան է

Կապանում անցկացվող տոնակատարություններին, մարզկենտրոնի մշակույթի կենտրոնի միջոցառումներին մշտապես իր պարային կատարումներով համ ու հոտ հաղորդող «Պարի աստղեր» շուկա ստուդիան բոլորեց իր հիմնադրման քառորդ դարը: Արդեն դժվար է հաշվել, թե քանի դեռահաս ստուդիայում հաղորդակցվեց պարավեստի գաղտնիքներին, ոմանք էլ այնքան հմտացան, որ ստեղծեցին իրենց պարային խմբերը:

Կապանի մշակույթի կենտրոնի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ «Պարի աստղեր» շուկա ստուդիայի ստեղծման 25-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն: Միջոցառմանը մասնակցում էին ստուդիայի տարբեր տարիների սաներ, հյուրեր Երեւանից, «Միլեն շուկա» բալետը: Հանդիսավարը հենց սկզբից խոստացավ հագեցած համերգային շուկա ծրագիր, անակնկալներ, մրցանակներ, ուրախ տրամադրություն: Իսկ մինչ այդ տեսաֆիլմ ցուցադրվեց պարային խմբի հիմնադրման եւ անցած ուղու մասին:

Քառորդ դար առաջ ստեղծված կոլեկտիվի համար 1998-ն իրադարձային տարի էր, նախ խմբի անդամները վերապատրաստում են անցնում Բուլղարիայում, ապա «Պարի աստղերը» համալրվում է նոր պարուսույցով՝ Արթուր Եղոյան, ում բեմադրած պարային կատարումները նոր շունչ հաղորդեցին ստեղծագործական խմբին: Նույն տարում Երեւանում կայացավ պարերի փառատոն,

միջերին: «Պարի աստղեր» շուկա ստուդիայի տարբեր տարիքային խմբերի կատարումները հանդիսականը վարձատրեց ջերմ ծափոջույններով: Բարձրակարգ կատարումներով հանդես եկավ «Միլեն շուկա» բալետը (գեղարվեստական ղեկավար՝ Արթուր Եղոյան):

Արդեն երկրորդ տարին է, ինչ Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվում է Ապրիլյան պատերազմի նահատակ, «Պարի աստղեր» շուկա ստուդիայի երբեմնի կրտսեր պարուսույց Նորայր Գասպարյանի մրցանակաբաշխությունը: «Պարի աստղեր» շուկա ստուդիայի գեղարվեստական ղեկավար Երիկ Քոչարյանը շնորհակալագրեր եւ «Նորայր Գասպարյան» հուշամեդալներ հանձնեց շուկա ստուդիայի լավագույն պարողներին, իսկ «Լավագույն պարուսույց» մրցանակին արժանացավ Կատարինա Կոստանդյանը՝ արժանանալով Նորայր Գասպարյանի պարը խորհրդանշող արձանիկին: Համերգային շուկա ծրագիրը եզրափակվեց միացյալ պարով, որին մասնակցեցին հանդիսության մասնակից բոլոր պարողներն իրենց սիրելի պարուսույց Երիկ Քոչարյանի հետ միասին: «Պարի աստղեր» շուկա ստուդիան շարունակում է իր գործունեությունը «Մենք դեռ կանենք ավելին» հավանուտ (բառի դրական իմաստով) կարգախոսով: Ճիշտ է, այս հանդիսությանը հաջորդելու է պարողների



որտեղ «Ռեփ ու փոփ պարեր» անվանակարգում խումբը զբաղեցրեց երրորդ մրցանակային տեղը: Արթուր Եղոյանը հիմք դրեց ժողովրդական պարերի մասնագիտացված ուսուցմանը: Ստուդիայի ստեղծագործական կյանքը բուռն էր, դա արտահայտվում էր շրջագայություններով Հայաստանի տարբեր քաղաքներում եւ գյուղերում, մասնակցության տարբեր փառատոներին, տպավորությունն այնպիսին է, որ պարելու ցանկությունը համակել էր Կապանի բոլոր դեռահասներին: Խմբի հիմնադրման համահեղինակներից Երիկ Քոչարյանի հավաստմամբ իր անեամեծ ծեռքերումն իր սաներն են նա արդեն պարողների երկրորդ սերնդին է ծանոթացնում պարի այրուբեմին, ուսուցանում արվեստի այդ տեսակը, հաղորդակից դարձնում պարային աշխարհի բոլոր գաղտ-

անառային հանգիստը, իսկ սեպտեմբերից թարմացված կազմով կշարունակեն հմտանալ պարավեստի մեջ եւ հաճելի պահեր պարգեւել հանդիսականին:

- 1998-ին գորակոչվեցի բանակ, եւ այնպես ստացվեց, որ ծառայությունն սկսեցի Կապանում տեղակայված զորամասում, որտեղ էլ ծանոթացա Երիկ Քոչարյանի հետ, ու այդ ծանոթությունը վերածվեց ստեղծագործական համագործակցության: «Պարի աստղեր» շուկա ստուդիան նվիրյալների մի խումբ է, ովքեր քառորդ դար պարում են եւ դեռ երկար կպարեն տեսնելով նրանց նվիրվածությունը պարավեստին, - համերգային ծրագրից հետո ասաց «Միլեն շուկա» բալետի գեղարվեստական ղեկավար Արթուր Եղոյանը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Ցավակցություն

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը խորապես վշտացած է Մելիսի Կարապետյանի անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին եւ մերձավորներին:

Այունյաց երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
«ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴՊԱՍՏԱՍՏԱՏՎՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝
Հեռ.՝ Կապան, Շահումյան 20/32:
(0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ.փոստ՝
Էլ.կայք՝ syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

ՌՊՅԱԿՆՈՒՄՆԵՐԻ ԶԵՆ ԳՐԱԽՈՍՎՈՒՄ
ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿՆԵՐԻՆ ԶԵՆ ՎԵՐԱԴՐՈՒՄ
ԿԱՐԺԻՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԶԻՆՆԱԿՆԵՐԸ:
ՆՅՈՒՔՆԵՐ ԵՆԵՐԿԱՅԳՆԵԼ ՄԵՔԵՆԱԳԻՐ
ՎԻՃԱԿՈՒՄ (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան
500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
խմբում տպագրվող նյութերի համար
խմբագրությունը պատասխանատվություն
չի կրում:

QR-407



Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
13.06.2018թ.: